2024 Worldwide Crusade in Honour of the Immaculate Heart of Mary

Համաշխարհային աղոթքի հաղթարշավ՝ ի պատիվ Մարիամի Անարատ Սրտի, Եկեղեցու ճգնաժամի ժամանակ Մարիամի բարեխոսությունը խնդրելու դիտավորությամբ:

Ֆաթիմայում Սուրբ Կույս Մարիամը մեզ տվեց արդյունավետ հոգևոր միջոցներ՝ մեր ժամանակների համար ստանալու առանձնահատուկ աստվածային ողորմություններ՝ Վարդարանի աղոթքը և առաջին հինգ շաբաթների աղոթական սովորությունը:
Առաջին հինգ շաբաթների աղոթական սովորությունը հետևյալն է. հինգ հաջորդական ամիսների առաջին շաբաթ օրերին կատարել Խոստովանություն և ընդունել Սուրբ Հաղորդություն, աղոթել Սուրբ Վարդարանը և տանհինգ րոպե խորհրդածել Վարդարանի տասնհինգ խորհուրդներից նվազագույնը մեկի մասին՝ Մարիամի Անարատ Սրտի հանդեպ գործված մեղքերի դիմաց հատուցում կատարելու դիտավորությամբ:
Առերեսվելով մեր օրերում Կաթողիկէ Եկեղեցուն համակած լայնածավալ ճգնաժամը՝ Ֆաթիմայի Սուրբ Կույսի Եղբայրությունը սկսում է համաշխարհային հոգևոր հաղթարշավ, որը կայանում է ամեն օր Վարդարան աղոթելու և առաջին հինգ շաբաթները վերը բացատրված ձևով պահելու մեջ, որպեսզի Մարիամի Անարատ Սրտի միջոցով խնդրենք Աստծո օգնությունը և միջամտությունը, հատկապես, Հռոմի Սուրբ Աթոռի համար:
Այս հոգևոր հաղթարշավը կսկսվի 2024թ. հունվարի առաջին շաբաթ օրը՝ հունվարի 6-ին, և կավարտվի 2024թ. դեկտեմբերի առաջին շաբաթ օրը՝ դեկտեմբերի 7-ին:
2023թ. դեկտեմբերի 8-ին Սուրբ Կույսի Անարատ Հղության տոնն է:

Քրիստոֆեր Պ. Վենդտ՝
Ֆաթիմայի Սուրբ Կույսի Եղբայրության Համաշխարհային Տնօրեն,
+Աթանաս Շնայդեր՝ Ֆաթիմայի Սուրբ Կույսի Եղբայրության Հոգևոր Օգնական,
Աստանայի Սուրբ Մարիամ Արքեպիսկոպոսության Օգնական-Եպիսկոպոս